



*Nor-Dan* Skrymly

*Lipshis*

# ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՀԱՄԱՐԱՏՈՒՈՒԹԵԱՆ

ՄԵՍՐՈՊԵԱՆ ԵՒ Ս. ՀՈՒՓՄԻՄԵԱՆՑ

ԱԶԳ. ԵՐԿՍԵՌ՝ ՎԱՐԺԱՐԱՆԵՑ

ՀՈԳՍ.ԲՍ.ԲԶՈՒԹԵԱՆ

Բ. Տպագրութիւն

1902—1903

Տ Ա Ր Ե Շ Ր Զ Ա Ն Ի



ԲՈՒՍՃՈՒՔ

1903

Տպագր. - Գ. Գ. Մազմանեան



104 8/29

3

Մ Ո Ւ Տ Ք

Պատրաստ դրամ	1901—1902 շրջանէ	152, 15
Պատմ. Թաղ. Խորհրդէն դանձուած		2240,
Հասոյթ պարահանդէսէ		671
Եւրոպա ծախուած վիճակահանութ. տոմսերէ		1686, 60
Դպրոցական տուրք	1901—1902 շրջանէ	19
«	« 1902—1903	1482
Ամսթշկ. մանչերու	1901—1902	75
« Աղջկանց	«	111, 20
«	« 1902—1903	595, 20
« Մանչերու	«	615, 20
Եկեղեցւոյ մէջ պտտցուած դանձանակէ		168, 60
Նուիրատուութիւններէ		307, 85
Աշակերտներու մտից տուրքէ		77, 50
Տոկոս		40
Բաթէնթի հաշուէ պարտք Թաղապետութեան		6, 47
		<u>8247, 77</u>

Ե Լ Ք

1901—1902 շրջանէ մնացած պարտք վճարուած	609, 40
1902—1903 10 ամսուան մէջ ուսուցիչներու	5058
Ծախք զանազան	
Փայտ եւ անուխ	267, 60
Տպագրութիւն	115, 65
Բացառիկ ծախք	55
Ուսուցչի մը ճամբու ծախք	19, 50
Ներքին պիտոյք	96, 75
Ծախք նորոգութեան	<u>98</u>
Աժիո	9, 32
Պահեստի դրամ	ոսկի 1440
Փոխատուութիւն ուսուցիչներու	152, 45
Պատրաստ դրամ	326, 10
	<u>8247, 77</u>

ՀԱՇՈՒԵԿԻՈՒ

ՊԱՐՏՔ

Ուսուցիչներու վճարելի Յուլ. եւ Օգոստ. ամս.	975
Բաթէնթի հաշուէ « Թաղապետութեան	6, 47
Առաւելութիւն հասոյթի	1627, 08
	<u>2608, 55</u>

ՊԱՀԱՆՁՔ

Պահանջք Պատմ. Թաղ. Խորհուրդէն	690
« Ուսուցիչներէն	152, 45
Պատրաստ դրամ	326, 10
Պահեստի	1440
	<u>2608, 55</u>

Բուսշուր 30 Յունիս 1903

Տեսրակներուն համաձայն եւ ճիշդ է  
 Վ. Համարակալի Գանձապետ  
 ԵՐ. ՅԱԿՈԲԵԱՆ Լ. ՎԻԻՐԹԵԱՆ

Բ

ԵՌԱՄԵԱՅ ԲԱՂԴԱՏԱԿԱՆ ՑՈՒՑԱԿ

ԵԶԳ. ԵՐԿՍԵՌ ՎԵՐԺՎԵՐՆԵՅ ՄԵՏԵԿՎԵՐՐՈՒԹԵԱՆ - ՌՈՒՍՉՈՒՐԻ

	ՀԱՍՈՅԹ		
	1900—1901	1901—1902	1902—1903
1. Նախորդ տարիէն փոխանցուած		19, 05	72, 75
2. Թաղ. Խորհուրդ	260	3000	2400
3. Դպրոցական տուրք	1031, 40	1664, 50	1501
4. Ամսաթոշակ	625, 80	1710, 60	1390, 66
5. Հանդէս	264, 45	1471, 95	671
6. Եւրոպա ծախուած վիճակահանութեան տոմսերէ			1686, 60
7. Հանդանակութիւն	157		
8. Նուէր	147, 80	83, 50	307, 85
9. Գանձանակ	36, 90	172, 45	168, 60
10. Մտից տուրք	15, 10	50, 70	77, 50
11. Շահ		2, 20	30, 68
12. Նուազութիւն հասոյթի	874, 05		
	<u>3412, 50</u>	<u>8174, 95</u>	<u>8312, 58</u>

ԾԱԽՔ

1. Տարեթոշակ պաշտօնէից	3167, 50	6165	6033
2. Զանազան ծախք	225, 95	492, 85	554, 50
3. Նորոգութիւն եւ գոյք		382, 20	98
4. Մանկապարտէզ		208, 10	
5. Փոխատուութիւն	19, 05		
6. Նախորդ տարուան բացը		874, 05	
7. Առաւելութիւն հասոյթից		72, 75	1627, 08
	<u>3412, 50</u>	<u>8174, 95</u>	<u>8312, 58</u>

1. Այս շրջանին Հոգաբարձութիւնս միայն մանչ տղոց վարժարանի մատակարարութիւնը ստանձնած ըլլալուն, Աղջկանց վարժարանի հաշիւը չէ անցուցած:  
 2. Յուլիս—Օգոստոս ամսուն կարելի է մասը եւս հասոյթ ըլլալ որոնք յաջորդ շրջանի հաշուին պիտի անցնին:

ԵՌԱՄԵԱՅ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՐԿՍԵՌ ՎԱՐԱԵՐԱՆՈՅ

	Պաշտօնեայք	Աշակերտ	Աշակերտուհի	Թոշակաւոր	Ձրի	Համազումար
1900—1901	5	86	..	48	38	86
1901—1902	11	86	75	113	48	161
1902—1903	11	93	74	132	35	167

ԸՆԴՀ. ՎԻՃԱԿ

ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒԹԵԱՆ

Ս. ՄԵՍՐՈՊԵԱՆ ԵՒ Ս. ՀՌԻՓՍԻՄԵԱՆՑ ԱԶԳ. ԵՐԿՍԵՌ ՎԱՐԺԱՐԱՆԱՑ  
(Սկսեալ 31 Սեպտ. 1901 և փակեալ 31 Օգոստ. 1902)

Ս Ն Տ Ո Ր Կ

Մ Ո Ւ Տ Ք

1. Պատրաստ դրամ			,30
2. Պատժ. Թաղ. խրհէ. գնձձ. 2470			
3. Հանդէսներէ հասոյթ	1471,95	3941,95	
4. Դպրոց. արքէ 1901-1902	40		
« « 1901-1902	1624,50	1664,50	
5. Ամսթշ. մնչ. 1900-1901	83,10		
« « 1901-1902	594		
« Աղջկ. 1900-1901	153,50		
« « 1901-1902	880	1710,60	
6. Եկեղեցւոյ գանձանակէ	144,15		
Պարգեւարաշխ. հանդէսէ	28,30		
Նուէրներէ	83,50		
Մտից տոմսէ	50,70		
Աճիօյէ	2,20	308,85	
7. Գնձձ. պհնջ. 1900-1901 շրջ	19,05		
8. Պարտք թաղապետութ.	8,70		
9. Փոխ. Հոգրրձ. անդամներէ	445	472,75	8098,65
		Լեւլ	8098,95

Ե Լ Ք

1. 1901 շրջանի բացը վճարուած	874,35		
2. Դպրոցական Պաշտօնէից	6009,30		
3. Զանազան ծախք տասնմն. 155,85			
Յուլիս ամսոյ մէջ տպագր.	20		
« « Պարգեւարաշխ-			
խուժեան հանդէսին	19,40	195,25	
4. Բացառիկ ծախքեր	120,30		
Փայտ եւ անուխ	73,30		
1900-1901 շրջանի			
վարժուհիին	84		
Նորոգութիւն եւ գոյք	382,20		
Մանկապարտէզի վճրւծ.	208,10	867,90	7946,80
5. Պատրաստ դրամ			152,15
		Լեւլ	8098,95

Հ Ա Շ Ո Ւ Ե Կ Շ Ի Ռ

Պ Ա Ր Տ Ի

1. Հոգրրձ. անդամներէ փոխ 445		
2. Վճարելի Ուսուցիչներուն 155,70		
3. « Թաղապետին. 8,70	609,40	
Առաւելութիւն հասութից	72,75	
	682,15	

Պ Ա Հ Ա Ն Զ Է

Պատժ. Թաղ. Խորհրդէ. գանձելի	530
Պատրաստ դրամ	152,15
	682,15

ձեզուքիւնը հաստատուած Թաղ. Խորհրդի կողմէ

Ի դիմաց քաղ. խորհրդոյ  
Ասեճաղպիւր Ասեճաղպէս

Գ. Պրահեան Ա. Փափազեան

ԲՈՒՍՃՈՒՔ 3 ՀՈՒՏ. 1902

Տեսրակներուն համաձայն և  
Համարակալ Գանձապէս  
Կ.Ռուբէն Գր. Յովհ. Ասլանեան

Գ

Տ Ա Ս Ն Ա Մ Յ Ե Ա Ց Հ Ա Շ Ո Ւ Ե Կ Շ Ի Ռ

Ս. ՄԵՍՐՈՊ. ՍԱՆՈՒՅ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

1902-3 ԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԵՇՐՁԱՆԻՆ

Պատրաստ դրամ	13,05
Գանձանակի հասոյթ	157,35
Շարաթական անդամաւճար	54,25
Մախուած դպրոցական առարկաներ	358,30
Անուղղակի գանձում (նուէր եւ հանդէսներէ)	147,95
Աշակերտներու քով մնացած ապառիկ	1,90
Մախուելիք առարկաներ	2,85
Աղքատախնամ ընկերութենէն նուէր ձրիներու	
գիրք հայթայթելու համար	40
Գումար	775,65

Գնուած վարժարանական պիտոյք	82,55
Դպրոցին համար ծախք՝ բօլիկրաֆ. կաւիճ	
տետրակ, մեղան եւ այլն	149,20
Ձրիներուն տրուած գիրք. տետրակ եւ այլն	213,20
Գնուած վաճառելի առարկաներ	273,40
Աշակերտներէն գանձելի	1,90
Պատրաստ ապրանք	2,85
Պատրաստ դրամ	52,55
Գումար	775,65

Բուսշուք 1903 Յունիս 30

Գանձապէս

Մրապիոն Յակոբեան

Ի դիմաց Մեսրոպեան Սանոց ընկերութեան

Ասեճաղպիւր

Մկրտիչ Կիւմրուեան

Ասեճաղպէս

Կոպեւնիկ Մխիթարեան


Ն Ա Խ Ա Բ Ա Ն Ի Տ Ե Ղ

5611

1901—1902 տարեշրջանի տեղեկագրի հրատարակութեան առթիւ մեր նախարանին մէջ, Հռիփսիմեանց ընկերութեան հաստատման վրայ խօսուած ատեն, սխալ մը սպրդած ըլլալը՝ քանի մը իրազեկ անձեր պաշտօնական տօմարներով, մեզ մատնացոյց ըրած ըլլալով, Հոգարարձութիւնս այդ մասին «Իրաւունք»-ի մէջ (1902 օգոստ. թիւ 53) ընդարձակ բացատրութիւն մը տուաւ չոր վերստին արտատպել աւելորդ շէնք համարեր:

Հոգարարձութիւնս իր վերջին շրջանի տեղեկագրին նախարանին մէջ՝ քաղաքիս կրթական գործին անցեալ շրջանները յիշած ատեն սխալ տեղեկութիւն մը տուած ըլլալով՝ ներկայիս կը փութայ դայն ուղղել:

1876 ինտիկիներէն չէ որ կազմուած է Հռիփսիմեանց ընկերութիւնը, (ինչպէս սխալմամբ գրուած էր մեր տեղեկագրին մէջ) որ աղջկանց համար առաջին կանոնաւոր վարժարանն է հիմնած իւր զգր. քարտէսով վիճակով մը վարած է աւելի քան 20 տարիներ. միայն իւր քօ-Ռուս պատերազմին շտեն մէկ տարիէ ստարիէ չափ դատելով:



Կարծէր սոյն Հռիփսիմեանց ընկերութեան պատմութեան վրայ ծանրանալ քիչ մը, որ քաղաքիս անցեալ կրթական գործին մէկ գեղեցիկ դրուագը կը կազմէ, եւ որ երեւան կը բերէ Ռուսճուքի Հայ ազգաբնակչութեան կրթասիրական ոգին եւ մանաւանդ ձեռներէցութիւնը:

1876 Յուլիս 31 ին կը կազմուի ընկերութիւնը նախաձեռնութեամբ Տիար Մաթաթի Բէթէնեանի, որ Ատենապետը կը նտրուի ընկերութեան, եւ անդամները կը լլան.

### Մեծ Տիարք

- |                                       |               |
|---------------------------------------|---------------|
| 2. Յարութիւն Աւրանեան                 | Ա. Տենադպիր   |
| 3. Փիլիպոս Սայեան                     | Համարակալ     |
| 4. Յակոբ հաճի Ստեփանեան               | Գանձապետ      |
| 5. Կիւմիւշ Մկրտիչեան                  | Հաւաքիչ       |
| 6. Յովակիմ Ինճեան                     | «             |
| 7. Աշիֆսան Սուֆիասեան                 | « (վախճանեալ) |
| 8. Գրիգոր Կարապետեան                  | Խորհրդակալ    |
| 9. Աւետիս Վարդանեան                   | « (վախճանեալ) |
| 10. Արթուր Մանուկեան                  | «             |
| 11. Օհան Փափագեան                     | « (վախճանեալ) |
| 12. Գեորգ Օվանիսեան Տեսուչ վարժարանին |               |

Ընկերութիւնը կազմուած ատեն, Տէր Կարապետ Աւագ քահանայի, իր վարժապետութեան օրով, բացած աղջկանց կրթարանը տարիներ առաջ արդէն փակուած է եղեր:

Ընկերութիւնը կազմուելուն պէս՝ կանոնադրութիւնը թաղ, խորհրդին կը ներկայացուի վաւերացնելու համար:

Ընկերութեան կանոնաւորութեանը եւ օրինապահութեանը վրայ գաղափար մը տալու համար կարծէ յիշել ի մէջ այլոց սա յօդուածը թէ՛ ո եւ է անդամ երբ բացակայ գտնուի նիստէն առանց բանաւոր պատճառի կը պարտաւորի 20 դրուշ տուգանք տալ: Ուրիշ յօդուած

մը կը տրամադրէ եղեր առանց Ատենապետին եւ համա-  
րակալին ստորագրութեան գրամ չի հանել սնտուկէն:

Ընկերութիւնը կազմուելէն քանի մը ամիս վերջը  
հարկ եղած գրամագլուխը գոյացնելով տուն մը կը վար-  
ձեն եւ զայն կը վերածեն ազջկանց վարժարանի, ամբողջ  
գրասեղանները եւ բոլոր ներքին պիտոյքները հոգալով:

Ընկերութեան հասոյթներն եղած են կանանց շըր-  
ջանակին մէջ պատգուած դանձանակներ, աշակերտուհեաց  
թոշակներ, բաժնեգիներ, զորս վճարած են ընկերու-  
թիւնը կազմող վերոգրեալ անձերը, ու դանազաններէ  
նուիրահաւաքում: Այս վերջինիս հասոյթը, ընկերութեան  
առաջին տարիները խիստ բեղմնաւոր եղած է, Ատենա-  
պետին, Տիար Մաթաքի Բէթէնեանի ջանքովը մանա-  
ւանդ որ, նոյն ատեն, քաղաքին կուսակալութեան ար-  
տաքին յարաբերութեանց գիւանին պաշտօնեաներէն  
ըլլալով բոլոր իրեն հետ յարաբերութիւն ունեցող ւն-  
ձերէն յանուն ընկերութեան նուէրներ հաւաքած է:

Գպրոցը ունեցած է 60—70 աշակերտուհի, որ Պօլսէն  
յատկապէս բերած վարժուհիներով կառավարուած է:

Ընկերութիւնը իր սկզբնաւորութենէն 1876 Յու-  
լիս 31 մինչեւ լուծման օրը 31 Հոկտեմբեր 1887, 71300  
դրուշի հասոյթ մը ունեցած է:

Ընկերութիւնը ոչ միայն իր հասոյթներովը գպրոցը  
կառավարած է շատ մը տարիներ, այլ նաեւ հասութարեր  
կալուած մը գնած է 100 ոսկի արժէքով, եկեղեցւոյ  
դանգակատան շինութեան մասնակցած է 7 ոսկի տա-  
լով, ու պատերազմի ատեն ալ կարգ մը ազգայիններու  
օգնութիւն ընձեռած է:

Ընկերութիւնը ամբողջ 11 տարի, զայն կազմող  
անդամները վարած են, միայն ատենապետը վերջին տա-  
րիները բացակայած ըլլալով քաղաքէս գործօն մասնակ-  
ցութիւն մը չէ ունեցած:

Ընկերութեան ծրագրին մէջ եղած է ազջկանց յա-  
տուկ վարժարանի մը շէնքին կառուցումը, որուն համար

Ատենաապետը իր բարձր շրջանակի մէջ ունեցած յարաբերութեանէն օգուտ քաղելով՝ հիւպատոսներու միջոցաւ դիմումներ ըրած է կարեւոր օտարազգիներու՝ սակայն պատերազմին ծագումը արդելք եղած է այդ գեղեցիկ նպատակին իրագործման:

Այսքան լաւ սկսուած ու լաւագոյն կերպով ալ շարունակուած սոյն ընկերութիւնը օր մը սակայն լուծուած է ու դպրոցն ալ գոցուած: Ու ցաւալին եւ մանաւանդ ուշագրաւը այն է որ ընկերութիւնը ինքնին չէ որ կազմալուծուած է, հետզհետէ պակսելով զայն վարող անձերուն եռանդը ու ստոր հետեւանք՝ դրամին կամ հասոյթներուն նուազիւր, ընդհակառակն, որովհետեւ ընկերութիւնը դադրած ատեն 5 սանթիմի պարտք չունենալէն զատ պատրաստ դրամ ունեցած է 75 նարօլէոնի չափ զոր յանձնած է իր դպրոցական գոյքերուն եւ գնած կալուածին հետ քաղաքին թաղական Սորհրդին սարացարձակ պայմանաւ որ յառաջիկային բացուելիք աղջկանց վարժարանին անունը դրուի.


«Հռիփսիմեանց վարժարան»:

Ընկերութեան լուծուելուն եւ դպրոցին փակուելուն բուն պատճառներն եղած են այդ սքանչելի գործէն բուն օգտուողները, այսինքն ծնողքները:

Վերջին վարժուհին՝ (կարժէ հոս յիշել ստացած ամսականը 7 1/4 օսմանեան ոսկի հաւասար է 166 Ֆր. ոսկիի, գաղափար մը տալու համար ընկերութեան ըրած վարձատրումին վրայ) խնդիրներ մը ունենալով ընկերութեան անդամներուն մէկ քանիին հետ գործը հետզհետէ ցաւալի համեմատութիւններ ատեր է՝ մանաւանդ ծնողքներուն, աւելի ճիշդը կիներուն խառնուելովը, որով ընկերութեան դէմ տխամար առարկութիւններ մը ծագեր է, ինչ որ պատճառ եղեր է վերջապէս անշահախնդրօրէն աշխատող անձերուն զգուանքը առաջ բերելու, որով ստիպուեր են ընկերութիւնն ալ դադրեցնել ու դպրոցն ալ գոցել:

Յետոյ է որ, կիներ ու օրիորդներ, նախկին աշակերտուհիներ Հոփոսիմեանց Ընկերութեան վարժարանին, իրենց մէջ ընկերութիւն մը կազմած են նոյն անունով՝ նպատակ ունենալով ազջկանց վարժարանին նիւթական պէտքերուն օգնել: Այդ ընկերութիւնն է որ մինչեւ ցարդ կը շարունակուի, խիստ պզտիկ սահմանի մը մէջ սակայն:

Իրաւամբ կարժէ փափաքիլ որ կանանց արդի Հոփոսիմեանց Ընկերութիւնը կանոնաւոր կազմակերպութիւն մը ստանալով իր նպատակը լաւագոյնս կարենայ գործադրել ի պատիւ Ռուսչուքի Հայ կիներուն:



# ՏԵՂԵԿԱԳԻՐ

## ՄԵՍՐՈՊԵԱՆ ԵՒ ՀՌԻՓՍԻՄԵԱՆՑ

Ա.ԶԳ. ԵՐԿՍԵՌՒ ՎՍՐԺՍՐՍՆՆԵՐՈՒ

1902 - 1903 ՏԱՐԵՁՐՋԱՆԻ



Հոգաբարձութիւնս իր պաշտօնավարութեան երրորդ տարեշրջանն ալ բոլորած ըլլալով ըստ առաջնոյն կուգայ ներկայացնել իր համարատուութեան տեղեկագիրը քաղաքիս Արգոյ Հայ դաղութին:

Հոգաբարձութիւնս Տիկնանց խնամակալութեան հսկողութիւնը այս տարի վերցուց Աղջկանց վարժարանի վրայէն եւ անջատեց Մանկապարտէզի մատակարարութիւնը, Մանկապարտէզի բարոյականի եւ նիւթականի հոգը ամբողջովին թողլով Պատմ. Թաղ. Խորհուրդին:

Երկսեռ վարժարաններու Ուսուցչական խումբը մեծամասնութեամբ նոյնը մնացած է, եւ որ մասնաւոր շրջաբերականով ծանուցուեցաւ (1902 Օգոստոս):

### ՈՒՍՈՒՑՉՍԿԱՆ ԽՈՒՄԲ

- 1 Արժ. Տ. Արիսակիս Գի. Գեղեցիկ
- 2 Տ. Գալուստ Գասպարեան
- 3 « Գեորգ Օվանիսեան
- 4 « Սահակ Յովհաննիսեան
- 5 « Սարգիս Յ. Մանուկեան
- 6 « Ստեփան Ապրազեան
- 7 « Վարդապար Տափեան
- 8 Օր. Զարուհի Սիւսեան
- 9 « Վարդուհի Անդրանիկեան

Ինչպէս անցեալին մէջ՝ նմանապէս այս շրջանին ալ Հոգաբարձութիւնս ինք ստանձնեց վարժարաններու տնօրինութիւնը, միայն Աւագ-Ուսուցչի պաշտօնը այս տարի նոր հաստատուեցաւ եւ յանձնեց տիար Ս. Ապագաեանի՝ որ միանգամայն Ատենապետն է Ուսուցչ. Մարմնոյն

Հողաբարձութիւնս, տղայոց նիստն ու կացը միօրինակ հսկողութեան ենթարկելու համար, անցեալ տարի ընդունուած սրահական դրութիւնը արդիւնաւոր գտած ըլլալով, այս տարի ալ յարմար դատեց նոյն դրութիւնը եւ ընդհանուր հսկողի պաշտօնը յանձնեց Տ. Փ. Փասպարեանի, որուն նախորդ տարւոյ օգնական-հսկողի պաշտօնին մէջ ցոյց տուած փոյթեռանդն գործունէութիւնը արդէն հաւաստիք մըն էր, այս տարի եւս աւելի օգտակար հանդիսանալու սոյն պաշտօնին մէջ եւ գոհ ենք յայտնելու թէ Հողաբարձութիւնս յուսախափ չեղաւ:

Այս տարեշրջանին Ուսուցչական մարմինը ունեցած է 15 նիստ՝ որոց մէջ վարժարաններու ներքին կանոնադրութեան, սաներուն եւ սանուհիներուն բարոյական, մտաւորական եւ ֆիզիքական դաստիարակութեան ու կրթութեան, եւ արդի մանկավարժական պահանջներու համաձայն դասաւանդութեանց մեթոտներու վրայ խղճամիտ խորհրդակցութիւններ, կարծիքներու փոխանակումներ տեղի ունեցած են, եւ տրուած որոշումները կէտ առ կէտ գործադրուած են բոլոր ուսուցիչներու համերաշխ գործունէութեամբ:

Վարժարաններու ծրագիրը—որ Պոլսոյ Ազգ. կեդր. վարչութեան Ուսումն. խորհրդոյ եւ պուլկարական նախակրթարաններու ծրագրերուն համաձայն պատրաստուած էր նախորդ տարի—այս շրջանին ինչ ինչ կէտերուն մէջ կարելի չեղաւ գործադրել որովհետեւ Փ. կարգի աղջիկներն ու մանչերը անչափահաս վիճակի մէջ կը գտնուէին. նաեւ աղջկանց Փ. կարգի ձեւագիտութեան դասը չաւանդուեցաւ այս տարուան համար:

Մանչերու ֆիզիքական զարգացման նպաստելու համար այս տարի աւելցաւ Մարմնամարզի դասը:

Թէեւ Ազգ. երգեցողութիւնը՝ եռաձայն եւ քառաձայն իբրեւ նորութիւն մը, մինչեւ 5 ամիս կանոնաւորապէս աւանդուեցաւ մասնազէտ պուլկար ուսուցչի մը պ. Սթանչէվի կողմէ, բայց իրմէ անկախ պատճառներով ստիպուեցաւ դադրեցնել զայն:

Այս տարեշրջանին մէջ ալ, Ուսուցչ. մարմինը ամէն ջանք ի գործ դրաւ մարմնական պատիժներու բնաւ չենթարկելու համար երկսեռ մանկտին եւ նախամեծար համարեց բարոյական խրատներու ազդեցութեամբ ուղղել անոնց թերութիւններն: Հոգաբարձութիւնս եւս ուսմանց մէջ Ա. Բ. Գ. հանդիսացողներուն, օրինակելի վարք ունեցողներուն, մաքրասէրներուն եւ ձեռագործի մէջ յաջողակներուն նուէրներ բաշխեց առ ի քաջալերութիւն:

Ուսուցչական մարմինը, այս տարեշրջանին հետեւեալ դասերը աւանդած է:

**ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹԻՒՆ**

Մանչերու Գ. կարգ	shur U. Ապագուեան
Աղջկանց Գ. կարգ	or. Զ. Սիւսնեան

**ԿՐՕՆԻ**

Մանչերու Գ. եւ Գ. կարգեր	Ա.րժ, Տ. Ա. Քինյ. Ֆեւրեան
Աղջկանց Գ. կարգ	« « «
Մանչերու Բ. կարգ	shur Գ. Օվանըֆեան
« Ա. կարգ	« « «
Աղջկանց Բ. եւ Ա. կարգեր	« « «

**ՀԱՅԵՐԷՆ**

Մանչերու Գ. կարգ.	shur Վ. Տափեան
« Գ. կարգ	« «
« Բ. կարգ	« «
« Ա. կարգ	shur Ա. Յ. Մանուկեան
Աղջկանց Գ. կարգ	or. Զ. Սիւսնեան
« Բ. կարգ	« «
« Ա. կարգ	shur Գ. Օվանըֆեան

**ՊՈՒԼԿԱՐԵՐԷՆ**

Մանչերու Գ. եւ Գ. կարգերը	shur Ա. Յովհաննիսեան
Աղջկանց Գ. եւ Բ. կարգերը	« «
Մանչերու Բ. կարգը	shur Ա. Յ. Մանուկեան

**ՖՐԱՆՍԵՐԷՆ**

Մանչերու	Գ. եւ Գ. կարգերը	shար	Ս. Ա. սրագաւան
Աղջկանց	Գ. կարգը	«	«
«	Բ. կարգը	or. 2.	Սիւսնեան

**ԹՈՒԱԲԱՆՈՒԹԻԻՆ**

Մանչերու	Գ. եւ Գ. կարգեր	shար	Ս. Յովհաննիսեան
Աղջկանց	Գ. կարգ	«	«
Մանչերու	Բ. եւ Ա. կարգեր	shար	Ս. Յ. Մանուկեան
Աղջկանց	Բ. կարգ	«	«
«	Ա. կարգ	shար	Գ. Օվանըֆեան

**ՊԱՏՄՈՒԹԻԻՆ**

Մանչերու	Գ. եւ Գ. կարգեր	shար	Վ. Տափեան
Աղջկանց	Գ. Բ. Ա. կարգեր	«	«
Մանչերու	Բ. եւ Ա. կարգեր	shար	Ս. Յ. Մանուկեան

**ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻԻՆ**

Մանչերու	Գ. Գ. Բ. կարգեր	shար	Ս. Ա. սրագաւան
Աղջկանց	Ա. կարգ	«	«
«	Գ. եւ Բ. կարգեր	shար	Վ. Տափեան
Մանչերու	Ա. կարգ	shար	Ս. Յ. Մանուկեան

**ԻՐԱԳԻՏՈՒԹԻԻՆ**

Մանչերու	Գ. կարգ	shար	Ս. Յովհաննիսեան
«	Գ. կարգ	«	Վ. Տափեան
«	Բ. կարգ	«	Գ. Օվանըֆեան
«	Ա. կարգ	«	Ս. Յ. Մանուկեան
Աղջկանց	Գ. եւ Բ. կարգեր	«	Ս. Ա. սրագաւան
«	Ա. կարգ	«	Գ. Օվանըֆեան

**ԳԵՂԱԳՐՈՒԹԻԻՆ**

Մանչերու	Գ. Գ. Բ. Ա. կարգք	shար	Գ. Գասպարեան
Աղջկանց	Գ. Բ. Ա. կարգեր	«	»

**ԳԾԱԳՐՈՒԹԻԻՆ**

Մանչերու	Գ. Գ. Բ. Ա. կարգք.	shար	Գ. Գասպարեան
Աղջկանց	Գ. Բ. Ա. կարգեր	«	Ս. Յովհաննիսեան

### ԵՐԳԵՅՈՂՈՒԹԻՒՆ

Մանչերու բոլոր կարգերուն sիար Սքանչիվ  
 Աղջկանց « « « Գ. Գասպարեան

### ՄԱՐԻՆԱՄԱՐԶ

Մանչերու Գ. Գ. կարգեր sիար Ս. Յովհաննէսեան  
 « Բ. Ա. կարգեր sիար Գ. Գասպարեան

### ՉԵՌԱԳՈՐԾ

Աղջկանց Գ. Բ. Ա. կարգեր or. Զ. Սիւսէեան

### ՇԱՐԹԱԿԱՆ ԴԱՍԱԻԱՆ ԴՈՒԹԵԱՆՅ ԺԱՄԵՐԸ

ՄԱՆԶ	Կրօն.	Բարգիւ.	Հայ.	Պղր.	Յրմ.	Թուար.	Պատ.	Ա. շար.	Խաղ.	Գեղար.	Գժար.	Մարմ.	Ձեռագ.
Գ. կր.	2	1	4	4	3	3	3	2	2	2	1	1	-
Գ. «	2	-	4	4	3	3	2	2	2	2	1	1	-
Բ. «	2	-	5	4	2	3	2	2	2	3	1	1	-
Ա. «	2	-	6	-	-	4	2	2	3	4	1	1	-
ԱՂՋԿ.													
Գ. կր.	2	1	4	4	3	3	2	2	2	1	1	2	4
Բ. «	2	-	5	4	2	3	2	2	2	1	1	2	4
Ա. «	2	-	6	-	-	4	2	2	3	2	1	2	3

Վարժարանացս երկսեռ ուսուցիչներու ամբողջին տարուան մէջ ունեցած բացակայութիւններուն գումարը կը հասնի 45 օրի որք հիւանդութեան եւ այլ բանաւոր պատճառներով տեղի ունեցած են:

Ս. Մեսրոպեան վարժարանը ըստ առաջնոյն ունեցաւ չորս կարգ. իսկ Ս. Հռիփսիմեանց վարժարանը երեք կարգ. որովհետեւ այս տարի կարելի չեղաւ Դ կարգ մը կազմել աշակերտուհիներու թիւին անբաւականութեան պատճառաւ:

Նորավարժ մանուկներու համար որոց թիւը 40 ի կը

հասնէր, Հոգաբարձութիւնս նախորդ տարուան պէս, նախապահութեան կարող մը հաստատեց իրեն յատուկ ծրագրով եւ ուսուցչուհիով:

Նախորդ տարուան Ներքին Կանոնագիրը, որուն մէջ մասնաւորապէս գրուած էին աշակերտներու պարտակահոսութիւններն, բարեփոխելով եւ ընդլայնելով կէտ առ կէտ ի գործ գրուեցաւ, եւ միանգամայն վարժարանաց սաղստօնէութեան պարտակահոսութիւնները գծող կանոնագիր մը պատրաստուելով գործադրութեան գրուեցաւ:

Այս տարի Մարտէն սկսեալ, Հոգաբարձութեանս յանձնարարութեամբ, շաբաթը անգամ մը երկսեռ ուսանողներու կորմէ արձակ եւ ոտանաւոր ինքնագիր շաբաթութիւններ կարդացուեցան հրապարակաւ, դասերու աւարտումէն ետք, ի ներկայութեան Ուսուցչական մարմնոյն եւ երբեմն Հոգաբարձութեանս՝ որոց նիւթերը շատ անգամ Հոգաբարձութիւնս կուտար:

Այս գրութեամբ, գրելու եռանդը մեծապէս արժարժուեցաւ երկսեռ ուսանողներու մէջ, եւ լաւ խմբագրուած գրութիւնները վարձատրուելով Հոգաբարձութեանս կողմէ, արտագրուեցաւ մասնաւոր տոմարի մը մէջ՝ որոց թիւը կը հասնին 47 ի՝ պատրաստուած 23 երկսեռ ուսանողներու կողմէ:

Աշակերտաց վիճակացոյց-տեսրակներու գործածութիւնը որ անցելոյն մէջ ունեցած էր իր օգտակարութիւնը, այս տարի ալ շարունակուելով իր զգալի բարերար արդիւնքը տուաւ ի մասին ուսանողաց յառաջգիւմութեան եւ բարեկրթութեան: Սակայն ցաւալի է ըսել թէ՛ պատահած են ծնողքներ որոնք ամբողջ սարին՝ վիճակացոյցի տեսրակին ձևողի դիտողութեան բաժնին մէջ, փոխանակ իրենց որդւոյն առ տնին ունեցած վարքն ու աշխատութեան մանրամասն տեղեկութիւններ տալու լոկ ստորագրութեամբ մը բաւականացած են:

Ըստ առաջնոյն այս տարի ալ Աշակերտներն ու Աշակերտուհիները երեք շաբաթը անգամ մը կիրակի

օրերը Եկեղեցի տարուեցան՝ Կրօնական պաշտամանց զգացումը տղայոց սրտերուն մէջ վառ պահելու համար:

Հոգաբարձութիւնս ըստ առաջնոյն այցելած է վարժարանները եւ ներկայ գտնուած է դասախօսութեանց:

Իսկ դուրսէն այցելուներու թիւը այս տարի եւս շատ ցանցառ եղած է, այնպէս որ հազիւ 6 այցելու ունեցած է որոց մէջ յիշատակելի է Պուլկարիոյ Հայոց Պատր. փոխանորդ Գեր. Վ. Ծ. Վ. Յակոբեան որուն արժանաւոր պատիւ մը ընծայուեցաւ վարժարանին պաշտօնէութեան եւ Հոգաբարձութեանս կողմէ:

Իսկ ծնողքները բնաւ չեն հաճած գէթ երբեմն ներկայ գտնուիլ իրենց զաւակաց աւանդուած դասերուն, ասիկայ արդեօ՞ք իրենց անտարբերութեան պէտք է վերագրել թէ Հոգաբարձութեանս վրայ ունեցած վստահութեան:

## ՏԱՐԵԿԱՆ ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹԻՒՆՔ

Ամալերջի հարցաքննութիւնները տեւեցին Յունիս 24—Յուլիս 4, սոյն քննութեանց ներկայ գտնուած են 43 հոգի, որոնցմէ միայն տասը աշակերտաց ծնողքներ եղած են:

Երկսեռ Վարժարանաց 7 կարգերուն 53 զանազան դասեր աւանդուած ըլլալով՝ 20 դասերը խիստ յաջող, 21 ը՛ շաւ, 9 ը՛ սխալ եւ 3 ը՛ սխալ գտնուած են:

Հոգաբարձութեանս եռամեայ շրջանին մէջ Մեսրոպեան Վարժարանը ունեցաւ 12 շրջանաւարտներ.

1900—1901 1. Կարապետ Պոսիկեան

901— 902 2. Արսաշես Գապասագաշեան

3. Յակոբ Մարտիրոսեան

4. Ստեփան Պոյաճեան

5. Օննիկ Սինանեան

902—903 6. Կոպեռնիկ Մխիթարեան Վկ. Ա.

7. Մկրտիչ Կիւմիւշեան « «

- |                         |         |
|-------------------------|---------|
| 8. Երուսանդ Կօշկակարեան | Վ.կ. Բ. |
| 9. Արմենակ Պոյաճեան     | « «     |
| 10. Խաչիկ Երամով        | « «     |
| 11. Մանուկ Տէրտէրեան    | « Գ.    |
| 12. Սրապիոն Յակոբեան    | « «     |

Պատշաճ կը դատենք հոս շեշտել թէ՛ Հոգաբարձութիւնս Ուսուցչական մարմնոյն հետ ջանադիր եղած է տոհմային լուրջ եւ ժամանակայարմար դաստիարակութեամբ եւ կրթութեամբ օժտել երկսեռ ուսանողները:

## Պ Ի Ի Տ Ճ Է



### Հ Ա Ս Ո Յ Թ

1902—1903 Տարեշրջանի համար ալ, գրեթէ անցելոյն մէջ պատրաստուած պիւտճէն գործադրութեան դրուած է:

1. Պատժ. Թաղ. Խորհուրդը այս տարի փոխանակ 3000 ի 2400 լեւ յանձն առած ըլլալով վճարել, տասնամսեայ վճարումները կանոնաւորապէս կատարած ըլլալուն մեր շնորհակալութիւնը կը յայտնենք:

2. Իպրոցական տնօրէն պիւտճէին մէջ նախատեսուած գումարէն փոքր ինչ աւելի եղած կը համարուի, որովհետեւ դեռ գանձելի կը մնայ 76 լեւ:

3. Անսարքոշակները թէեւ պակաս հասոյթ արտադրած են, բայց ապառիկ գրեթէ 60 լեւ մնացած է, որովհետեւ այս տարի արձակուրդի ամսականները բարդուած էին իրենց ամսաթոշակներուն վրայ:

4. Հոգաբարձութիւնս այս տարի միայն պարահանդէս մը տուաւ Փետրվար 25 ին, Մեսրոպեան վարժարանի մէջ, որ զուտ հասոյթ արտադրած է 671 լեւ:

Նմանապէս Հոգաբարձութիւնս յաջողեցաւ 1686 լեւ 60 սանդիմի զուտ հասոյթ մը արտադրել եւրոպական վիճակահանութենէ մը զոր կարելի եղաւ ի գլուխ հանել աջակցութեամբ հրապարակիս Հայ վաճառական դասուն,

ՆԱԽԱՏԵՍՈՒԱԾ

ՊԱՏՃԷՆ 1902—1903 ՏԱՐԵՇՐՁԱՆԻ

ՊԻՒՏՃԷՐՆ

Մ ՈՒ Տ Ք

1. Թաղ. կորչրդէն 2400
2. Գալրոցական տուրքէ 1500
3. Ամսաթոշակներէ 1500
4. Հանդէսներէ 1000
5. Գանձանակէ եւ նուէրէ 200
6. Մտից տուրքէ 50

1901 եւ 1902 շրջանէն

աւելցած հասոյթ

72, 75

6722, 76

Ե Լ Ք

1. Պաշտօնէից տարեթոշակ 6060
2. Վանելախայտ, զանազան.ք 520
3. Նորոգութեան 142, 75

տումսակները սպառելով Եւրոպայի մէջ. այս առթիւ չէ կարելի մեր երախտագիտական զգացումները չյայտնել սոյն դպրոցասէր անձնաւորութեանց:

Սոյն գումարէն 1440 ոսկի ֆր. պահեստի դրուած է եւ Հոգաբարձութիւնս, պատժ. Թաղ. Խորհրդոյ համահաճ հաւանութեամբ որոշած է անձեռնմխելի պահել սոյն գումարը եւ տոկոսը վրան բարդելով գործածել միմիայն վարժարանաց համար գնելի կաշուածի մը, եւ կամ Աղջկանց վարժարանի շինութեան յատկացնել:

5—6. Գանձանակը, նուէրը, Մսից տւրքը նախատեսուածէն աւելի եղած են, շնորհիւ դպրոցասէր ազգայիններու, որք զանազան առիթներու մէջ նպաստած են վարժարանին:

#### ԾԱԽՔ

1. Պաշտօնէից տարեթոշակը գրեթէ նոյնը մնացած է. այս տարի եւս Հոգաբարձութիւնս յաջողած է ամեն ամիս կանոնաւորապէս ընել վճարումները եւ նոյն իսկ 152, 45 լեւի պահանջք մը ունենալ պաշտօնէից վրայ:

2—3. Միւս ծախքերն ալ մօտաւորապէս պիւտճէին մէջ նախատեսուածին պէս եղած են:

\* \* \*

Երկսեռ Ուսանողաց ընդհ. թիւը հասած է 167 ի որոցմէ 93 ը մանչ եւ 74 ը աղջիկ. բայց ասոնցմէ 5 մանչ եւ 8 աղջիկ հրաժարելով այսօրուան թիւը իջած է 154 ի. 35 ը ձրի եւ 119 ը թոշակաւոր. թէեւ մեծ մասին ամսաթոշակը 50 սանդիւմէն վեր չէ. (ամսաթոշակները 0, 50—4, 80 լեւի են):

Մեւրոպեան Սանուց ընկերութիւնը, այս տարի իր հաստատութեան 16րդ տարին թեւակոխելով, այս շրջանին 234, 50 լեւի առաւելութիւն մը ունեցած է նախորդէն եւ ձրիներու 213, 20 լեւի դպրոցական պիտոյք մատակարարած է, ընդդէմ նախորդ տարուան 136, 85 ի (տես հաշուեկշիռ Գ.):

Այս առթիւ ընկերութիւնը երախտապարտ է տեղ-  
ւոյս Հայ համայնքին, որ գանձանակի շրջագայութիւնը  
արդիւնաւորած եւ հանդէսներու առթիւ քաջալերած են  
զայն, կամաւոր նուիրատուութեամբ:

Աղխատախնամ մարմինն ալ ըստ սովորութեան 31  
երկսեռ ուսանողաց զգեստ, կօշիկ եւ շրջագգեստ մատա-  
կարարեց նոր տարւոյ առթիւ եւ 40 լեւի դրամական  
նուէր մը ըրաւ Մեսրոպեան վարժարանի աղքատիկ  
տղայոց դասագրքերու հայթայթման համար, հետեւաբար  
չնորհակալութեան արժանի է:

Զոյառ & Շ. տունը չմոռնալով իր բարի սովորու-  
թիւնը, այս տարի ալ Ս. Զատիկի առթիւ մանչ աղքատիկ  
տղայոց 25 գլխարկ նուիրեց:

Արդ, մեր այս տարուան տեղեկագիրը վերջացնելու  
պահուն, չէ կարելի լռութեամբ անցնիլ տեղւոյս Հայ  
համայնքին, Հոգաբարձութեանս հանդէսը ցոյց տուած  
վստահութեան եւ աջակցութեան, որով միայն կարելի  
եղաւ կրթական խաղաղ տարի մը եւս բոլորել, զոր կը  
կարծենք թէ նախորդներէն աւելի արդիւնաւոր եղած է  
թէ՛, կրթական եւ՛ թէ՛ նիւթական տեսակէտով, եւ  
միանգամայն այս առթիւ դարձեալ Աղջկանց վարժարանի  
չինութեան անհրաժեշտ պէտքը տեղւոյս Հայ գաղութին  
լուրջ ուշադրութեանը կը յանձնենք:

30 Յունիս 1903 Բուսշուֆ

ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ

Ազգային Երկսեռ Վարժարաններու

Ասեմադպիր  
Վ. Գույումեան


Ասեմապէս  
Սր. Յակոբեան

Խորհրդակցանի

Գանձապէս

Մ. Պետկեան Գր. Յովհ. Ասրանեան

Լ. Բարբեան



Handwritten number 2375/5611

ար Գիտ. Գրադ.



FL0394699



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0394699

464  
1199